

ՏԵՕՐԻՆ-ԽԻՐԱԿՐԱՊԵՑ


Z. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան	520 դր.
Վեցամսյա	250 »
Պամսյա	150 »
Էկստրա-մուսոն արկ.	70 Լր.

Բաժանորդագրութիւնք կ'օգտին
ամեն ամսոյ թիւ եւ 15

100 ՓՈՒՐԱ



Fondateur
M. MAMOURIAN
Directeur-Rédacteur en chef
H. MAMOURIAN

„Arévélian Mamoul,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓՈՒՐԱ

Օրաթերթ ազգային եւ փառաբանական

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հայոցս համար անցնող շարժումն ամենակարեւոր ու կենսական լուրն էր անկախ Հայաստանի մը ճանաչումը Համաձայնական Մեծ Պետութիւններէն:

Թէև ցարդ Բարիզի Ազգային Պատուիրակութիւնէն պաշտօնական հեռագիր մը հասած չէ, սակայն հաւանական է որ մինչև ներկայ տողերուն հրապարակելն այդ հեռագիրն ալ հասնի:

Աթէնքէ՛ շեղէն Ազգային Պաշտպանութեան Քաղաքական Կուսակցութեան նախագահին կողմէ՛ տեղա գտնուող Աթէնքի Հայ գաղութին Պատուակալ Նախագահ՝ Պ. Հրանդ Նիզորեանի ուղղուած շորհաւորական հեռագիրն սպայտոյց մըն է որ այդ լուրը ճիշդ է և որեւէ տարակոյտ չկերցնիր:

Անշուշտ ամբողջ Հայութիւնն ուր որ ալ կ'գտնուի, երկիր կամ արտասահման, Ռուսաստան կամ Թուրքիա ամենամեծ գոհունակութեամբ մը ստացաւ այս լուրն և ապահովուեցաւ թէ՛ Մեծ Պետութիւններն իրաւունքի և արդարութեան սկզբունքին վրայ կոթնած երբէք չպիտի ուզէին անտեսել Հայոց կրած անլուր ու աննախընթաց տառապանքներն և դարերու ընթացքին անվիճելի իրաւունքն եղող անոնց հայրենիքը պիտի վերագործնէին իրենց օրինաւոր ժառանգներուն:

Իսկ թէ այդ հայրենիքն իր պատմական վաղեմի սահմաններով թէ անճիտուած պիտի յանձնուի, այդ մասին վաղահաս է թէև որեւէ կարծիք մը յայտնել, բայց այժմէն կրնանք երևակայել թէ՛ ծովէ-ծով փափաքը չպիտի գտնէ գէթ առ այժմ, իր ամբողջական գոհացումը:

Սակայն եթէ նորակազմ Հայկական կառավարութիւնն, ինչպէս շատ անգամներ ըսինք, կարող ըլլայ արիւնքալ ապագային, այդ փափաքը կ'իրականանայ կարծաւորէն շատ աւելի մտաւոր ժամանակի մը մէջ:

Վարչապետներու վերջին խորհուրդին մէջ արուած կ'երևի Հայաստանի ճանաչումին որոշումը:

Մ. Քլեմանսօի վերջնական իրաւունքը թերևս տեղի տուած ըլլայ Համաձայնական վարչապետներու նիստերու դադարումին: Միւս կողմէ Համաձայնողին վերջին նիստին մէջ, անոր աշխարհութիւններն շարունակելու թէ կասեցնելու մասին խորհրդակցութիւնն մը եղած էր և որոշուած որ այս պարագան ներկայացուի վարչապետներու խորհուրդին:

Անգլիոյ վարչապետն Լոյս ձօրձ աւելի կ'հակէր դիպուկներու համաձայնողի մը յանձնել առկա ինդիքներու լուծումը և ինչպէս վերջերս հասած հեռագիրներն կ'տեղեկացնէին, բայց Արևելեան խնդիրէն որ պիտի քննուի ու վճռուի վարչապետներու խորհրդէն միւս բոլոր հարցերն պիտի քննուին դիպուկական համաձայնողին մէջ:

Յրանսական դահլիճին փոփոխութեամբ, Յրանայի ներքին ու արտաքին քաղաքականութեան մէջ զգալի փոփոխութիւններ, ինչպէս ցոյց կուտար նոր դահլիճին ծրագրերը, չպիտի ներմուծուին: Մ. Միլլանտ պիտի մասնակցի քանի մը նախարարներով Հայաստանի Համաձայնողի խորհրդակցութեանց, իսկ ամենավերջին լուրերն կ'տեղեկացնէին թէ՛ այդ խորհրդակցութիւններն պիտի շարունակուին Լոնտոնի մէջ, ուր վերագործած է Անգլիոյ վարչապետն, ներկայ գտնուելու և պատիտատուելու համար անգլիական խորհրդարանի բացումին որ տեղի պիտի ունենայ Փետր. 10ին, դարեւ ի վեր սովորութիւն եղած հանդիսութիւններով և արարողութիւններով. որոնք դադարած էին պատերազմի շրջանի պահուն:

Անգլիա՝ դարաւոր ու վաղեմի սովորութեանց ու օրէնքներու աւանդական երկիրն է, որ սակայն չգաղբիք քաղաքակրթութեան առաջին ջանակիրներէն հանդիսանալու Պատիւ ու պարծանք կ'համարի շերտաւոր աւանդական ըլլալ իշխողներու իր նախնեաց. որոնք հակառակ իրենց աւանդաւորութեան, աշխարհի առաջնորդներն եղած են և խորհրդարանական առաջին հիմնադրութիւնը կերտած, երբ դեռ Յրանայ՝ միապետութեան մականին տակ ծնած, գաղափարն իսկ չունէր մարդկային իրաւանց և մարդկային ազատութեանց տարրական սկզբունքներուն վրայ: Որքան կարեւոր որ փոքր սպիտակ և մերկին նման փորձառութիւն չունեցող ազգ մը՝ որ վաղը հայրենիք մը պիտի ունենայ կազմակերպելու՝ օրինակ առնէին անգլիացիները:

Թուրքիոյ խնդրին նման յամր կրթական նաև անվերջանալի Ֆիլոմէի խնդիրը: Երազման վերջին թերթերու տեղեկութիւններուն վրայ յիշելով, այնպէս կերեւի որ Լոյս ձօրձ աւելի հակում ունի Խալիլի պահանջումներուն գոհացում տալու: Ֆիլոմէի նախահաճութիւն մասին ինչ ինչ երաշխաւորութիւններ սպասուելով:

Հայաստանի Համաձայնողին աշխատութեանց ուղադիր հետեւող մը շատ զիջողութեամբ պիտի կրնայ ըմբռնել թէ՛ Անգլիոյ վարչապետին կարծիքներն մեծ կշիռ ունեցած են Համաձայնողին որոշումներուն վրայ և Համաձայնողին մասնակցող բոլոր տեղութեանց պատուիրակներուն վրայ մասնաւոր ապահովութիւն և ազդեցութիւն մը ունին անոնք, որով կարելի է այժմէն երևակայել որ, եթէ Լոյս ձօրձ վճռած է Ֆիլոմէին իտալիոյ թողուլ, այդ հարցն ալ լրացած կրնայ համարել և Խալիլի՝ որ Լոնտոնի գաղտնաբեր վրայ ոյժ ստացած, Համաձայնականներու կողմին սպառնալի իջաւ, իր արդար պահանջումներուն մէջ կ'գտնուի և մեծ անիրաւութիւն մը պիտի ըլլար զայն զրկել իր իրաւունքներէն:

Մեծ պետութիւններն ամէն ժամանակ աւելի ներկայ պայմաններուն մէջ, փափաքող են ժամ առ ժամ վերջացնել ամեն առեակ խնդիրներ և գոհես անոյժ մնացած հարցեր, որոց կարգին կ'գտնուի նաև Արևելեան խնդիրը, որովհետև ծանր պարտականութիւններու առջև կը գտնուին և փափաքող են

ազատ ըլլալ զբաղելու համար իրենց ներքին խնդիրներով թէ անտեսական և թէ վարչական:

Աշխարհի զամպան մասերուն մէջ տիրող անասոյց վիճակներն և ա՛ն օր նակ օրէնադրութիւններն, որոնք ահագին աշխարհներ վերիվայր չըջի ինչ, չեն կրնար անտես առնուիլ պետական հեռատես նախարարներէ, որոնք քան կանաքար կ'ուզեն ազատ ըլլալ տրտաքին խնդիրներու բեռէն, արթուն կրկնելու համար մութի մէջ գործող և մարդկութեան թշնամի այն տարրերուն ղէմ, որ կ'ջանան երկրագործի օրէնքներն ու հիմնադրութիւններն վերիվայր չըջել և արեան մէջ խեղդել իրաւունք և արդարութիւն:

Եթէ ցայսօր չյաջողեցան Համաձայնական պետութիւններն աշխարհի լրակատար հաշտութիւն մը տալ, քնա զարմանալի չէ, որովհետև կարգ մը շահեր հաշտեցնել, հին կարգուսարքեր տեղափոխել, տկարներու պաշտպանութիւն շնորհել, ճնշուածներու ազատութիւն տալ, կարծաւորէն շատ ու շատ ծանր պատասխանատու բեռեր էին, որոնց հարթարումը ժամանակի կ'կարօտի որպէսզի հիմը խախտ չըլլայ և ապագան անստուգութեան մէջ չմնայ:

Ահա այս և ուրիշ կարգ մը պատճառներով ժամանակ մըն ալ սպասուի հարկ կը տեսնուի:

ՀԱՅԵՆԻՔԻ ՄԵՋ

Երէկ, քօքարաներու օրը, միևնոյն ժամանակ կատարուեցաւ թուրք կատակերգութեան վերջին արարումը:

Թուրք աշխարհը իշխանութիւնն քօքարաներ ծախելու արածութիւն իրմէ առնուած չըլլալով հոս ու հոն շահագրէ արգելք հանդիսանալ և նոյն իսկ պատող մէկ քանի օրերոց ներ արգելափակելու կառավարութեան շէնքին մէջ, ստիկանութեան սենեակը...

Եթէ իր ճարտարութիւնն այսպէս ի գործ չդնէր բաւական զարմանալի պիտի երեւէր, պէտք է անշուրճ քան մը ընէր և ըրաւ:

Իր միլիտար գոհերու կարիւններուն համար հաւաքուելիք լուծանիքուն արգելք ըլլալ ուզեց, անգոմ մըն ալ նուիրագործելով սա գաղափարը թէ՛ զըջացած է այդ օրերին կենդանի թողնուին և թէ՛ անոնք ալ իրենց ծնողաց նման պէտք էր ջարդէր, փճացնէր...

Գո՛հ եմ եղածէն, եթէ չըլլար պիտի զարմանայի, թո՛ղ ամբողջ աշխարհ ակամտես ըլլայ թէ՛ գեռ իրենց այս վիճակին մէջ, ինչ կ'մտածեն և ինչպէս կ'ըմբռնեն իրենց կացութիւնը:

Իրենք քան մը չհանցան արգելք հանդիսանալ սպիտակ քօքարաներու վաճառումին, եթէ քիչիկ մը խելք ու հեռատեսութիւն ունենային, պիտի ըմբռնէին թէ՛ չէին կրնար իրենց ուղարկելին իրականացնել և վերջի վերջոյ տեղի ալ պիտի պարտատուութիւն, շեղէն իշխանութեանց միջամտութեամբ, ինչպէս որ ալ պատահեցաւ, ուրիշ ինչօք այդ ճախող քայլն առին, ցոյց տալու որ իրենք թուրք են, թուրք պիտի մնան և չեն կրնար փոխուիլ նաև մանտանող թրքութիւնէ զուրս ելնել չեն կրնար իրենց նեղմիտ մտայնութեան պատճառաւ:

Տուփերուն վրայ թուրքերէն զբուռած չըլլալն ալ իրենց ջիգերուն է դպիր, տեսէք թէ օրքան ամբիտ են ինչո՞ք կուզէին որ տուփերուն վրայ թուրքերէն ևս զուէր, բայց այդ տեսակ արարք մը եթէ ընել փափաքէին Հայերն, իրենք անուղղակի խնդրել, ազալել, պաղատել պէտք էին թուրքերէն չգրուելու:

Թուրքերէն գրել, որքերու ի նը պատճառով վաճառուելիք քօքարաներու վրայ թուրքերէն վերապետութիւններ գնել, իրենց օճիրն իրենց երեսին

ազալակել, իրենց օճիրն իրենց ճակատին խարանել պիտի նշանակէր...

Այսքօնն ալ չկրցան հասկնալ, այսքօնն ալ չկրցան խորհիլ, Հայերու դահլիճները...

ԲԱՅԱՏՈՒԹԻՒՆ ՄԷ ԵՐԵՒԱՆԻ ԲԱՆԱԿՈՒԹԻՆՆԵՐՈՒՆ ՎՈՅՅ

ԻՆՉ ՈՒՉԵՑԻՆԻՔ ԻՆՉ ՍՏՆՍԱՐ Բ.

Հ. Հ. կառավարութեան ներկայացուցած երէք բանտոյնացիներու հետ սկսան բանակցել Ազգ. Պատուիրակութեան կողմէ գրկուած առաքելութեան երկու անդամները և Պ. Սամսուն Յարութիւնեան Այս վիճակն ընտրութիւնը նոյնպէս Ազգ. Պատուիրակութեան ըրած էր, բայց մեր մեկնումէն առաջ իր հաւանութիւնն ստացուած չըլլալով՝ մեզի թողուած էր իրեն հետ տեսակցել վերջ առաքելութեան լրիւ կազմը կառավարութեան ծանուցանելու Ազգ. Պատուիրակութիւնը հարկ համայնք ժողովրդական կուսակցութեան վարչաբնէն Պ. Սամսուն Յարութիւնեան մասնակց ընել բանակցութիւններուն սա՛ պատճառներով:

Ժողովրդական միջև Մարտ 28 կը գործակցէին կառավարութեան մէջ գաղտնակցականներուն, անոնց հետ հուսարար թուով կառավարութեան քաջուած և երեսուր բնութիւն երբեք ղէմ պոյքթօթ ըրած էին Մարտ 28 «աքթօթ» սպորտիստներու մէջ բերելով, նոր գաղտնակցական կառավարութիւնը ընտրութիւնը ելնելու ալ անոնց առաջարկած էր մանկ նախարարութեան մէջ, մեր կ'ընելք համաձայնութիւնը, հետեւորդ ղերեք ևս ուղղակի կը շահագրգռէր թէ՛ սկզբունքներու և թէ՛ կազմուելիք տոժ. կառավարութեան մէջ իրենց մասնակցութեան տեսակէտէն Սյս կէան ալ կարեւոր է շեշտել որովհետև վերջէն գաղտնակցական կառավարութեան գաղտնակցական բանագնացներու ուղեցին Պ. Սամսուն Յարութիւնեան և իմ կուսակցական հանգամանքին վրայ յիշուլ լուրս համար թէ բանակցութիւններ կուսակցութիւններու միջև տեղի կ'ունենային և ոչ թէ ազգ. պատուիրակ

կուսակցության ու չ. չ. կառավարութեան միջև:

Բանակցութեանը ընթացքին, տեսնալով որ Պ. Պոզոս Նուպարի անուանակար վարչապետութեանը համար մեր գրած պայմանին կը տրուէր անձնական փառասիրութեան դիտում մը զոր ան բացարձակապէս չունէր Ազգ. Պատերազմութեան նախագահը ինք անոր վրայ պնդելու կողմը եղած չէր արդէն Պ. Պատերազմութեանը լրացումը թէ գլխաւոր դժուարութիւնը ազգային ըլլար, մենք նկատի առինք նաև ժողովուրդին մէջ մերձայն պայմանին շուրջ կամաւ տարածուած սրտաւ մեկնութիւնները և իբրև զիջում նախ առաջարկեցինք պատուիրակութեան նախագահին տալ միանգամայն չանբաւարարական գերագոյն ներկայացուցիչ տիպոսը և ի վերջոյ երբ այս ալ մերժուեցաւ, արտաքին գործերու նախարարութիւնը՝ պայմանաւոր Երեւանի դահլիճին մէջ «Թուրք» ներկայացուցիչ արտաքին գործոց գեր-նախարարի ալ ներկայացուցի Ազգ. Պատերազմութեան կողմէ և չլլայ զուշ նակցական մը Արդ, միակ որոշ պատասխանը որ մինչև բանակցութեանց աւարտումը տրուեցաւ այս անպարկին՝ բանաձևացներէն Պ. Մարտիրոս Յարութիւնիանի «Ոչ, դեր նախարարը զաշնակցական մը պիտի ըլլայ» պատասխանէն էր, ինչպէս ցոյց կուտան երկուստեք ստորագրուած՝ տեսնալով Պ. Վրացեան աւելցրին տուած այդ յիտարի առեւտրութեան մէջ թէ՛ ինք ըսած է որ «այդ մասին կարելի է խորհիլ»: Հետեւ թէ կ'ընդունին այդ պայմանը գէթ՝ երբ պիտի թէ վերջին խօսքերն էր որ կարտասանուէին և մենք մեր բոլոր զիջումները ըրած էինք, առանց իրենց կողմէ դոյզն զիջում մը մեզի մտածելու միտքովը քայլ մը տեսած ըլլալու, ընդհակառակն ընկրկուեցին միայն գտնելով:

Երկրորդ խնդիրն էր՝ կազմուելիք առժամայն դահլիճին մէջ երկու կողմի ներկայացուցիչներու թիւին խընդիրը կ'ընդունէին որ թրքահայերը նոյնքան աթուռ ունենան որքան ռուսահայերը, բայց կը մերժէին ոչ-գաշնակցականներու հետ:

«Ոչ» է թէ Պ. Ահարոնեան ընդունած ալ է այդ պայմանը, մենք չենք կրնար տար հասանիլ—կ'ըսէին— որովհետև վերջին ընտրութիւնները ցոյց տուին թէ Հանրապետութեան սահմաններուն մէջ ժողովուրդին ինքնուրու առ հարիւրը զաշնակցութեան կողմն է, և թուրքիայէն ու արտասահմանէն եկած մեր ընկերները կը հաւաստեն թէ մտաւորապէս նոյն բանն է նաև թրքահայոց մէջ: Հետեւ ապէս, կառավարութեան ինը անգամներու վրայ կը պահանջենք որ հիւրը ըլլան զաշնակցական, երեքը Ազգ. Պատերազմութեան կողմէ ներկայացուած ոչ-գաշնակցական և մէկը պատերազմութեան նախարարը՝ անկուսակցական մը, ընտրուած երկու կողմի համաձայնութեամբ: Մենք, հոս ալ մերժեցանք ճիշդ մը ընելով, առաջարկեցինք իսկիցը կազմել իննի տեղ առաջ անգամով՝ հինգ գաշնակցական, չորս ոչ-գաշն. և մին անկուսակցական: Այս առաջարկը, վայրկեան մը ընդունուած, նոյնպէս մերժուեցաւ և կառավարութեան բանագնացներուն վերջին, վերջնական պայմանը եղաւ իննի վրայ հինգ և չորս, իրենց հինգին մէջ մտցնելով նաև ապագայ պատերազմական նախարարը՝ որուն ոչ անկուսակցական մը և ոչ ալ բարձրաստիճանի զինուորական մը ըլլալու պէտքը կ'ընդունէին այլևս, ըսելով թէ ան կրնայ «Ինչ մը և ըլլայ» Ինչպէս թէ զաշնակցական հայ զօրավար գոյութիւն չունի և բանակին ստուար մեծամասնութիւնը նոյնպէս զաշնակցական չէ. անշուշտ այս պատճառաւ է որ կ'ուզուէր «տալ» իննի դահլիճին մէջ պատերազմական նախարարութիւնը յանձնել «Ինչ զաշնակցական» մը, հակառակ բանակը կուսակ-

ցական վեճերէ հետո պահելու անհրաժեշտութեան — Այս ալ մէկն է այն կէտերէն որոնց մասին համաձայնիլ չկրցանք:

Անցողակի պէտք է աւելցնեմ թէ իրենց պահանջած 5 նախարարութիւններն էին՝ վարչապետութիւնը, ներքինը, արտաքինի փոխանորդութիւնը, պատերազմական և աշխատանքի, «Մնացեալին մասին կրնանք համաձայնիլ» կ'ըսէին՝ երբ արդէն չորս նախարարութիւն միայն կը մնար. աւելնքն ալ քաղաքական նշանակութեան զօրք Պէտք է աւելցնեմ զարկեցինք նախարարութիւններէն մէկ մտար փոխարտած համաձայնութեամբ յատկացնել անկուսակցական ձեռնհաս անձնաւորութիւններու, մերժում ըստացանք սո՛ւ նախածանօթ պատճառաւորութեամբ թէ՛ անկուսակցական կը նշանակէ հակա-գաշնակցական: ՎԱՀԱՆ ԹԷՐԷԿԵԱՆ

ՄԵՐ ԳՐԱԳԵՏՆԵՐԸ

Հարցեր կան՝ որոնց դարձանք էական անհրաժեշտութիւն մը ըլլալով հանդերձ, որուն տխուր այժմէութիւններուն մէջ զժողովուրդը գաւառապարտուած կը մնան մտացութեան ու անհետացումի: Ծիշտ այս հարցերէն մէկն ալ է մեր գրագետներ, ու կամ առհասարակ զբնի վաստակուորներու հանդէպ վաղուց ի վեր ցոյց տրուած ցաւալի անտարբերութիւնը, կամ աւելի միշտ պատակաւորութեան թերացումը:

«Ձայնը Հնչեց» ի ներկայացման առթիւ եղած բանաստեղծները՝ որուն ամփոփումը արդէն կազմուեցաւ «Արեւելեան Մամուլ» մէջ, շատ բնականօրէն առիթ մը կուտար մեզ անդրադառնալու այս անտեսուած հարցին շուրջ: Վստահ ըլլալով որ Պ. Պարթևեան շատ զիբրընդունելի փափկանքովութեամբ մը չունիցէ աւելի յառաջ երթալ իր արտաստեղծութեանց մէջ, որովհետև հարցը որ պիտի պաշտպանուէր՝ իր գտնն էր պարզապէս — Հայ գրագետին դատը:

Ուրեմն մենք պէտք չէինք միայն անտարբեր լսող մը ըլլալ իր խօսքերուն, և սկզբունք ստանութեան մը տակ թողիլ զանոնք, քանի որ առիթը եկած էր այլևս այդ հարցի մասին կատարելու մեր պարտքը:

Այո՛, առաջին անգամը չէր որ մենք կը լսէինք այդ արտայայտութիւնը, և թիրթիրը առաջինը չէր որ պիտի անդրադառնային մեր այս կենսական պարտականութեան շուրջ:

Եւ սակայն յոյժ արգահատելի է որ մենք գոհուեցանք յարգանքի ու գնահատումի այն հաւաքական շեքով վերաբերումը, զոր ակնկալելու մեծագոյն իրաւունքը ունէին մեր գրագետները:

Հայ գրականութեան թանկագին բանվորները համարուող վերապրող մի քանի աշխուհ զեմքերը՝ որոնք կոչուած են արհաւիրքի օրերու հետեւանքով թափուր մնացած մեր գրական գետնի շարաշուք ամայութիւնը փառաւորելու զժողովուրդը մինչեւ այսօր չի կրցան վայելել ժողովուրդի ընդհանուր գուրգուրանքի գործնական ապացոյցը, պարզ ըսենք՝ նիւթական անհրաժեշտ քաշակութիւնը:

Այո՛ մենք չզգացինք տակաւին թէ այս ազգը փառքի ու ազատագրութեան արշալոյսը կը պատէր որքան իր քաղաքական գործիչներու անձնւորութեան, նոյնքան և աւելի մտքի ու գրչի այն մեծ առաջնորդներուն որոնք իսկական յիպոփոսութիւնը տարբերեցին ազգային կրթութեան ու զարգացումի հայկական գործունէութեամբ:

Մենք չանդրադարձանք վերջապէս այն անհրաժեշտ իրողութեան թէ՛ այս քաղաքացիները ազգին վաղուց ի վեր կրած անլուր մարտիրոսագրութիւնները, ու անոր մինչեւ այսօր մղած հերոսական պայքարը՝ մարդկային ի-

րաւունքի պաշտպանութեան համար, եթէ անմահաց չլլալին գրական գործիչներու հոյակապ երկասիրութիւններով, ու անոնց պատմական գերազանց էջերու բացառիչ ահագանքը չի զղորդեցնէր պահ մը տիեզերական արդարութեան ամբարձակ դունդը՝ մենք ապահովաբար չը պիտի տեսնէինք վաղուան փայլուն վերածնունդի այս գեղեցիկ նախնորդը:

Եւ սակայն ոչ մէկ կերպով կըրնայ արգարանալ մեր անտարբերութիւնը, մենք պէտք է միանգամ ընդ միշտ համոզուինք թէ զրակամութիւնը արդար մը թա՛ ձրացեալ ու լուսուորման անհրաժեշտ պայմանն է, այն ազգը որ չունի գրականութիւն, ազգաւ է բարոյապէս:

Մենք պէտք է նկատի ունենանք բոլոր մեծ ազգերու իրենց գրականութեան հանդէպ տածած գուրգուրանքն, և լսու ախմ պիտանք գնահատել մեր գրչի հազուադէպ վաստակուորները, ոչ թէ պղտոնական ծափահարութիւններով կամ չոր ու ցամաք ներփողականներով, այլ բուն իսկ գրական վարձատրութեամբ:

Դարը փոխուած է այլևս և կիսափրկ թանկագին...

Մենք պէտք է գիտնանք արժեցնել ուրեմն մեր գրագետներու կեանքը և զանոնք պահել իրենց արժանի բարձրութեան վրայ:

Եւ ինչո՞ւ արդեօք կարելի չլլար ապահովել նիւթական պատուաբեր գնահատութիւն մը այն ամեն գրագետ հեղինակներուն՝ որոնք իսկապէս նուիրուած այդ բարձր կոչման՝ իրենց թանկագին գրչի ի սպաս կը գնեն ծաղկեցնելու ու ճոխացնելու ցեղին գրականութիւնը:

Ամեն պարագայի տակ պէտք է ընել ինչ որ անհրաժեշտ է և չի թողու որ մեր թանկագին՝ բեկորները կորսուին ու անհետանան՝ գաւառապարտի անտարբերութեան տխուր բարոյաբուժման տակ:

ՆԵՐՍԷՍ ԻԷՍԻՄԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

«Ամալթէա» «Ողջոյն Հայաստանի» վերատուութեամբ խմբագրական մը կ'ընտրէ որմէ կ'ըսողներ հետեւեալ հատուածները:

Բարիդի թերթերը վստահութեամբ կ'տեղեկացնեն թէ՛ Հաշտութեան Համաժողովը ծանուցած է Պոզոս Նուպարի, Հայաստանի անկախութեան ճանչցած ըլլալը: Այս մեծ և գեղեցիկ զեպքը կարելի չէ որ չուրախացնէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհն և մանաւանդ այն ժողովուրդներն որոնք կ'սիրեն ազատութիւնը, որոնք կրեցին տառապանքի տարիներ, որոց մէջ կ'գտնուի նաև չէն ազգը:

Հայաստանի յազատագրութեան մեծ լոյս մը կ'ալլալու Փոքր Ասիոյ խաւարին մէջէն, հոն ուր մինչեւ ցարդ քրիստոնեայ ժողովուրդներն կ'տանչուէին, մինչդեռ այսօր յուզուած, իրենց շնորհակալութիւններն կ'ուղղէին Աստուծոյ իրենց ձեռք բերած ազատութեան համար:

Այլևս ստրուկ չէ Հայաստան և տպագրայ հայութիւնն պիտի կրնայ հրպարտանող որ մեծ պայքարէ մը ետք կ'ազատագրուի:

Այս մեծ ուրախութիւնն Հիւլէնն ալ կ'զգայ, որ մտէն ճանչցած է հայ ժողովուրդին մարտիրոսագրութիւնը, ինքն ալ կրած ըլլալով հասարակային եղող տառապանքներն՝ աքսոր ու ջարդ:

Հայաստան ազատ՝ քրիստոնէութեան և քաղաքակրթութեան երազներէն մին կ'իրագործուի, արեւելեան ժողովուրդներն կ'տանան իրենց տառապանքներուն վարձք: Հայաստանի կ'մնայ այժմ վերսկսել իր անցեալ փառաւոր պատմութեան ընթացքը: Հայաստանի վերականգնումը Փոքր Ասիոյ մէջ շատ կարեւոր է, որովհետև նոր ուղի մը կ'ապրուի հայ և հիւլէն քաղաքակրթութեան համար:

Այս երջանիկ օրը հելլեն ազգը կ'ողջունէ հայկական նորակազմ կառավարութեանն և կ'ընդունուի հայութիւնն իր կազմած քաղաքական ընկերակցութեան համար Աթէնքի մէջ:

Ահհոն է հելլենութեան զգացած ուրախութիւնն, որովհետև Հայաստանի վերակազմուելով հելլենութիւնն եւս պիտի զարգանայ:

Ազգային մինչև Յոսիակոնի եզերքները հիւլէնութիւնը սքանչալցած այս նաւած աւետիսէն, իր մաղթեանները կ'ուղղէ իր ազատուած երաջարներուն և արտի յուզումով կ'զգչէ, որ զժոյն քեզ Հայաստան...:

ԹԵՂ. Ա. ՆԱԶԻՐԷԹԵԱՆ

Ազգային Անցուկարծ

Հայ որդի՛ օրը, Հինգշաբթի, քրտութիւնն ալ կարծես ուզեց՝ առաջին տեղամ ըլլալով թերևս ժպտիլ հայութեան այդ զժառոգ կորիւններուն: Ամբողջ իզմիր ուկերութեան մէջ կ'գտնուէր, ամեն կողմ կիներ, աղջիկներ, սքառութիւն, Հայ, Յոյն և օտար Յունաց բերած թէ բարոյական և թէ նիւթական օժանդակութիւնն կարելի չէ անտես առեւել ու մոռնալ, Հիւլէն բանակին սպաներն ու զինուորներն գուրգուրանքով վերաբերուեցան հայոց հանդէպ:

Իրեկոյնան որոշեալ ժամուն հետեւեալ կ'ընթացէր տուփերն կ'սկսէին հասնել Սիվրիսարեան Ազնաւորեան վտանգատուուն ըստ նախապէս եղած որոշման մը և քօքարաքներու կարգաւիր յանձնարարութեան կողմէ որոնք կը կազմէին Պ. Պ. Բրօք, Վիթալիս, Ժօն Վէլի և Հէքիմեան, Մ. Եսայեան, Վ. Պալապանեանի, Տ. Մսերեան և Գ. Յարթեան կ'յանձնուէին յանձնաժողովայն անդամներու Պ. Պ. Ազնաւորեանի, Ա. Դուրիթի, Ս. Թաւառեանի, Գ. Պալապանեանի, Վ. Էլմաստանի, Կ. Տիւրքի՛ որոնք մտուկներու կիներն քննելէ յետոյ կ'ընտրուին և պարտենակութիւնն կ'պարպէին մասնաւոր պարկերու մէջ, անհար ըլլալով այդ միջոցին զանոնք համարուող գործողութեան սկսիլ, որ քանի մը օրերու կը կարօտի, յետոյ պարկերն կ'կրկնուէին և կ'տեղաւորուէին, մինչ միւս կողմէ Սիվրիսարեան Ազնաւորեան հսկայ վաճառատան մէջ Պոյսքառութիւնն անցք մը կ'կատարէին ի մեծ ուրախութիւն հոն գտնուող բոլոր ներկաներուն: Եւ այսպէս վերջ կ'գանէր այդ յիշատակելի օրը:

«Վերթիւր» արծաթեայ բաժակի Ա. մասի մրցումներուն վերջինը տեղի պիտի ունենայ այս կիրակի, 1 Փետրվար, (Կ. Ե.) ժամը 3ին, Բանեօնի դաշտը, հայկական և Ունտուրըս խումբերուն միջև:

Եթէ հայկական խումբը այս մըրցումին ալ յաղթէ, Ա. մասի մրցումներուն համար, 8 նիւով առաջին կը հանդիսանայ Էօրօք և Արօքի խումբերուն հետ միասին:

Առաջնորդարանէ կը տեղեկացնեն. — Հրէից խոստովանութիւնը կողմէ Առաջնորդարան այցելած է Մ. Պօսք Մէնչէն և քօքարաքներու առիւ իրենց մասնակցութիւնն պէտք եղածին պէս բերած չլլալուն ցաւ յայտնած է, շատ ուշ հասած ըլլալով հրաւիրողները:

— Թարանթօ իր գործակարներէն որքան համար հաւքած 660 ղր. ը յանձնած է գեղեցիկ նամակով մը Առաջնորդարան:

— Հայոց շնորհակալութեան զգացումներն ներկայիւր համարեւելէն բարձր զօմիւր Մ. Սթէրիապանիս այսօր ժամը 11ին տաւուս մասնաւոր պատգամաւորութիւն մը այցելութեան պիտի երթայ, ընկերակցութեամբ աթէնքի հայ դաղու թի Պատ. Նախագահ Պ. Հ. Նիքոթեանի Այդ պատգամաւորութեան մասնակցելու համար հրաւերը եր ուղղուած էին հետեւեալ ազ-

Պայիններու. Պ. Պ. Մ. Ազնաւորեան, Ա. Աւետիքեան, Տ. Աշնան, Մ. Գո- ճամանեան, Վ. Էլմասեան, Մ. Էքեղ- լէր, Ս. Թազարեան, Յ. Կիւզէլեան, Տօթի Պ. Կասանէ, Յ. Պաքըճեան, Մ. Պաքըճեան, Վ. Պարտիզպանեան, Զ. Սպարթալը:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆՔ

Երուանդ Պերկամալեանի մահուան առթիւ, Պերկամալեան ընտանիքը կը նուիրէ Ազգ. Կեդր. Որբանոցին երկու հարիւր լիրտ օսմանեան:

— Ազգ. Ընկ.— Տ. Ղեւոնդ Ա. քն. Ծաղկեան 2 ոսկի Օննիկ Փէլտիմալ- ճեանի և Եղիա Կառապանեանի մահ- ւան առթիւ: (Գ.Պ.)

Տեղական Լուրեր

ԶՕԲ. ՆԻՏԵՐ հրէկ պաշտօնական այցելութիւն առաւ Փոքր Ասիոյ բա- նակիր հրամանատար Քոմիսնոս Մի- իթիսի:

ՍՊԱՆԴԱՆՍ քաջող մսագործ մը ճամբու վրայ գտաւ երկու լքեալ նո- բածիներ: Անոցմէ մին մասամբ յօ շոտուած էր խոզերու կողմէ: Կրցուած է ազատել միւսը զոր որդեգրած է:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ պաշտօնեաները ձերբակալած են Անճէտ օղու Մէնճէտ, անգործ, Սրբոս Աֆէնտօղլու, բիւ- նակիր և Պիքսիթիս Պիտարէքիս գործիքեան համար:

ՀՐԴԻՉ մը ծագած է երէկ ժամը 15ին Օսմանօղլու փողոցին մէջ ժօրժ Պիտարի հրուշակի գործատուն մէջ: Կրակին առջև կարելի եղաւ առնել ժամանակին:

ՀԱՆՐԱՅԻՆ Առողջապահական Տնօ- րհնութեան մեզի կը ծանուցանէ թէ վերջին քսան չորս ժամուան մէջ պա- տահած են հետեւեալ դէտքերը. ութը սպանիական կռիփի, մէկ կարմրախ- աի և 1 ծաղկախտի մահացու դէպքեր:

ԿԸ ՏԵՂԵԿԱՆԱՆՔ թէ մաքրատու- քը հարիւրին հարիւր տեւցած ըլլա- լով ալքոլի վրայ, այս նիւթին դինը 65էն 110 դրուչի բարձրացած է. Շըր- ջող յուրերու համաձայն կառավարու- թիւնը նպատակ ունի նոյնը ընել շաքարի համար ալ:

ԿՌԻՓԻ դէմ նախագուշական միջոց մը նկատած են Ամերիկացի բժիշկնե- րը, սաք ջուրով խառն Բօլքը՝ որուն վրայ աւելցնելու է քիչ մը Դարիճ (Քարչին):

ՈՒՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՅԵԼՉՈՒՄ ԳԵՂԵՅՈՎ ՍԵՌԻՆ

Երեկոյթներն, պարանցիկները, թէ- յերը, ընդունելութիւններն սկսան Եթէ նրբամաշտկ ու արդուզարդի սի- բահար զեղեցիկ սեւը կուզէ իրապէս պնտել օրուան պահանջքին համե- մատ, և ունենալ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՎՈՒՍՏՆԵՐ

ԳՕՍԹԻՍ ԹԱՅԵԼՈՒՄ

ԲԸԹԻՍ ԲՈՎ ՍԵՐԻՆ

ԳՕՐԴԵՆԵՐ ՊԱՅՈՒՍԱՆՆԵՐ

Դիմէ. Մօսկօֆ փողոց թիւ 35:

Ա Ձ Գ

Ազգ. Հրեանդանոցի հաստատու- թեան 42րդ տարեդարձին առթիւ, յա- առջիկայ կիրակի 1 Փետր. 1920, վի- ճակիս Տեղապահ Գեր. Տ. Յովհան Մ. Վ. Կարապետեան հանդերձեալ է Ս. Պատարագի մատուցմամբ հոգեհան- զրատեանպաշտօն կատարել Ս. Լուսա- լորիչ Եկեղեցւոյ մէջ, ի հանգիստ հոգեոց հիւանդանոցի կառուցանողոց Տիարք Յակոբ և Յովհաննէս Սպար- թալեանի հարգատանջ:

Յաւարտ Ս. Պատարագի, շէնքն մէջ սեղի պիտի ունենայ սովորական հանդէսը, նախագահութեամբ Տեղա- պահ Նոր:

Սկզբն. ժամը. 7,30 Ս. Պատար. 9 Ազգ. Հրեանդանոցի Զմիւռն. ՀՈԳԱՐԱՂՈՒԹԻՒՆ (Կնէ)

Վ Ր Ի Պ Յ Կ

Պ. Վ. Թէքէեանի երէկուան «ժո- ղովուրդի Զայն»է մեր արտասպաճ յօդուածին պայմաններու առաջին մասին Գ. հատուածը կարգալ հետե- կալ կերպով:

Գ. Առժամեայ կառավարութիւնը պիտի բաղկանար չորս թրքահայ և առևտանայ գաշնակցական և չորս թրքահայ ու առևտանայ չ-գաշնակ- ցական անդամներէ. կառավարութեան իններորդ անդամը՝ պատերազմական նախարարը՝ պիտի ըլլար անկուսակ- ցական մը, երկու կողմին հաւանու- թեամբ անուանուած:

Հ Ր Ա Ի Է Ր

«Զարթօնք» Լատանակոն Միու- թիւնը օրակարգ ունենալով՝

- 1. Ծրագրականնազգրի ակնարկ մը,
2. Խորհրդակցութիւն յառաջիկայ տարեշրջանի համար, ստիպողաբար ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր երկսեռ անդամները կիրակի 31 Յուլի. 920 ժամը 2.30ին (Կ. Ե.) Միութեան կեդրոնը, Հայ Ընթերցատան մէջ: Ան- հրաժեշտ ներկայութիւն և զիրար տե- ղեկացնել կը խնդրուի:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Վ Ա Ր Ձ Ո Ւ Է

Մէյլսանէ Պողազը Սարը Եօրկի փողոց Աղամճան խան թիւ 13 տէ- փօն վարձու պիտի տրուի փափա- քողք դիմել յիշեալ խանի տիրոջ ա- մէն օր Ժ. 9—12 և Կ. Ե. Ժ. 2—5:

Ա Ն Դ Ա Մ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ն

«ԶԱՐԹՕՆԵՔ» Լատանակոն Միու- թիւնը կը թևակոխէ իր երկրորդ տա- րեշրջանը նոր անդամակցիլ փափա- քողները կրնան դիմել վարչութեան՝ Միութեան կեդրոնատեղին, հայ ըն- թերցատունը:

Սոյն Միութեան մասնակցիլ կը նշանակէ զանազիլ լաւ ըն- կերական շրջանակի մը մէջ, օգտու- իլ անդամներու յատուկ առանձնաշը- նորհումներէն և ըստ կարի օգտակար ըլլալ անոր ընդգրկած վեճմ նպատա- կին:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ Զ. Լ. Մ.

Table with 3 columns: Item, Price, Total. Includes items like Լօնտօն, Նիւ-Եօրք, Բարիզ, etc.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵՆՈՅՑ

ՊՐՆ. ՅԱՆՁՆԱՅՈՒՄԲԷՆ, Անուշի գրուած է ամսոյ 23ին երկուշաբթի օր Ժ. 11էն — 12, 3 ամ- սուան համար, 1 Փետրվարէ մինչև Ապրիլի վերջ զինուորական ծառայու- թեան հոցի պատրաստութիւնը:

Նուազուրդ տեղի պի տ ունենայի՜ր Կրասնեակներուն մէջ անոնք որ կու- զեն մասնակցիլ կրնան դիմել ամեն օր Ժ. 11—12:

Պարէնան. Յանձն. Տնօրէն Տեղակալ Գրգուպետ Ն. ԼԱՍՊԱՐԱՔԱՔԻՍ

ԱՊՐԱՆՔԻ քննաւորման, նախ- արդի, մասնային գոր- ծողութիւններ, Պօլի ամեն յեղուք թերթու մէջ Զեր ծա- նուցումներուն համար ազդի և չօգի- նաւային ընդհ. գործակալութեան (ԱՐՄԱՆԱՆ ՅԱԿՈԲԱՆ) ղիւնցեֆ Ղալաթիոյ Բարաքը, Ֆալհօրօ քաւաճի անկիւնը թիւ 2:

Վ Ե Ր Ջ Ի Ն Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

ԽՈՆԴԱՎԱՌՈՒԹԻՒՆ ՊՕԼՍՈՅ ՄԷՋ

Հայաստանի անկախութեան հռչակման առթիւ Պօլսոյ մէջ հայերը խառ- դովառական ցոյցեր թէեւ ուզած են կազմակերպել բայց ստիպանութեան կողմէ արգելուած է:

ԳԵՐՄԱՆ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

Գիրմանները համաձայնական պետութիւններու յայտարարած են թէ՛ պա- տասխանատուներուն յանձնումը բարարական շփոթութիւններ յառաջ պիտի բերեն:

ԱԳՐԻԱԿԱՆԻ ՀԱՐՑԻՆ ՇՈՒՐՁ

Ագրիականի հարցի մասին Բասիլի և Թրամպիդի միջեւ անհամաձայնու- թիւնը հեղհեղ կը սաստկանայ:

Հ Ե Ր Ք Ո Ւ Մ

Օսմ. հաշտութեան փութացումին համար Համաժողովին յիշատակագիր մը տալու լուրը բոլորովին անհիմն է կ'ըսէ Ներքին գործոց նախարարը:

ՌՈՒՍ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՆ

Պօլսո հասած են փախստական սուս գաղթականներ, որոնց մէջ կը զըս- նուին վիրաւոր սուս սպաներ:

ՍՊԱՆԻՈՅ ԲԱՐԻՉԻ ԴԵՍՊԱՆԸ

Սպանիոյ Բարիզի գեապանն սպգերու դաշն կցութեան մասին խորհրդակ- ցութիւններ ունենալու համար Մատրիս գացած է:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՏՈՐՄԻՂԸ

Դեապաններու խորհուրդը գերման պատերազմական նաւերու բաժանման խնդրին քննած է:

Ա.ՀՄԷՏ ԲԻՋՍ. ԵՒ ՈՒԻԼՍԸՆ

Անճէտ Բիզա պէյ Մր. Ուիլսոնի նամակ մը դրկելով կ'իշխատակէ անոր մէջ թուրքիոյ նկատմամբ բրած կարգ մը խոստումները և միեւնոյն ժամանակ գրելով որ եթէ Թուրքիա Պօլսէն հեռացուի տարաւս վիճակ մը պիտի ստեղծուի:

ԼՕՆՏՏՕՆԻ ՀԵԼԼԷՆ ԴԵՍՊԱՆԸ

Լօնտօնի հեւլէն գեապանը «Բէէլ Մէլ»ի մէջ յօդուած մը գրած է որով կը պարզէ Թուրքիոյ խնդրոյն ժամ առաջ կարգադրութեան անհրաժեշտութիւնը, որու առկախ մնալուն պատճառաւ ամիսն 4 միլիոն ոսկի ծախք մը և Օ. հազար զինուորներ զէնքի տակ պահելու կ'հարկադրուի:

ՀԱՄԱԶԱՅՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՆՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Պօլսէն «Թալազ»ի ուղղուած ստիպողական հեռագիր մը կը ծանուցանէ թէ գաշնակից պետութիւններու բարձրագոյն քօլիսէրները Բ. Դրան առուած են շատ խիստ և վճռական ոճով խմբագրուած նոր ծանուցագիր մը:

Այս ծանուցագիրը կ'պարտաւորէ կորք մը անձնատրուութեանց ընթացքին հետեւանքով Թուրքիոյ մէջ ստեղծուած խիստ վտանգաւոր կոչութեան մասին ծանր դիտողութիւններ «Թալազ»ի թղթակիցը կ'աւելցնէ թէ՛ այս ծանու- ցագիր գաշնակին վերջերս հանդիպած դժուարութիւններուն հետեւանքով տրուած է:

Վ Ե Ր Ա Ն ՈՐ Ո Ւ Մ Ն Ե Ր ՈՒ Յ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ

Մ. Միլանն նախագահեց վերանորոգման յանձնաժողովին շրջման նիստին

ՊԱՏԵՐԱԶՄ. ԲԱՐՁՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Ֆրանս. պատերազմ. բարձր խորհուրդը վերակազմուած պատերազմական նախարարին նախագահութեան տակ, Ֆօշ, Ժօֆրը, Բէթէն մարալ խոսուրը անոր կ'մասնակցին ինչպէս նաև զօրութեան տաս զօրավարներ և Զօր. Պիւեո՝ պետ բանակի ընդհ. սպայակապին (Մարշալ Կո Բէթէն խորհուրդին փոխ նա- նախագահն է:

ԲԱՆԱԳՐԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. Օկարտի և Լիթթիլիոֆի միջև Բրիտանական և Ռուս Սովիէթ գերի- ներու փոխանակման մասին բանակցութիւնները քիչ մը ընդմիջուեցան Մ. Լիթթիլիոֆի անձնական դժուարութիւններով գտնել չլայողելով բնակարան մը: Պանդակին միւս հիւրերը առաքիցցին իր ներկայութեան մասին և անոր հա- մար հրուէր ստացաւ մեկնելու:

ՁԻՆ. ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Պէլրուսթէն կ'ստեղծկացնեն թէ Դամասկոսի Շէրիֆիտն կառավարութիւնը զին. պարտաւորիչ ծառայութիւն հաստատած է. Դամասկոսի և արեւելեան զօտիին մէջ:

ԿԱՐՏԻՆԱԼ ՏԻՊՈՒԱ

Գահիրէէն կ'ստեղծկացնեն թէ՛ կարտիսալ Տիւպուա խանդավառ ընդու- նելութեան մը արժանացած է մօտ օրէն կը մեկնի դէպի Փոքր-Ասիոյ ծովե- զերքները:

ԱԳՐԻԱԿԱՆԻ ՀԱՐՑԸ

Հասմէն կը հեռագրուի թէ՛ այն պարագային ուր համաժողովը գործա- դրութեան պիտի դնէ Լօնտօնի գաշնակը, Սուկո-Սլաւ կառավարութիւնը սպա- հովաբար պիտի պատրաստուի պատերազմի Բոսալիոյ հետ, միւս կողմէ Սթըն- յի հեռագիրները կ'վստահեցնեն թէ՛ Լուկո-Սլաւ գաւնդեր ու կամաւորներ համախմբուած են Տալմաջիօ մէջ:

